

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Խորհրդատվական ծառայություններ

Պատուհան 1-ի շրջանակում մեկնարկային փաթեթների իրականացում, GEF/QCBS-2019/001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՈՐԱԿԻ ԵՎ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
ԳԷՀ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ - 2000001401

Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկեր Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից (ԳԶՄՀ), Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամից (ՄԶՕՀ) և դրամաշնորհներ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից (ԳԷՀ) և ԳԶՄՀ-ից: Այս միջոցների մի մասը ԳԶՄՀ-ն մտադիր է օգտագործել՝ Խորհրդատվական ծառայություններ *Պատուհան 1-ի շրջանակում մեկնարկային փաթեթների իրականացում, GEF/QCBS-2019/001* պայմանագրի շրջանակում վճարումներ կատարելու նպատակով:

Սույն առաջադրանքի հատուկ նպատակը

Խորհրդատվական ծառայությունների մատուցման սույն առաջադրանքի նպատակն է բարձրացնել թիրախային համայնքներում խոցելի խմբերի (կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ, երիտասարդներ և աղքատ տնային տնտեսություններ) կայունությունը և նրանց հնարավորություն տալ կայուն գյուղատնտեսական համակարգերի ու տեխնոլոգիաների գործիքների, մեթոդների, կարողությունների և ներդրումների միջոցով զարգացնելու և բարելավելու իրենց գյուղատնտեսական արտադրանքը:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ԾԻԳ) բոլոր շահագրգիռ խորհրդատուներին հրավիրում է ներկայացնելու հետաքրքրության հայտեր՝ առաջադրանքի իրականացման համար խորհրդատուների ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով: Խորհրդատուն կարող է ներկայացնել միայն մեկ հետաքրքրության հայտ կամ որպես անհատ, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեության /ՀՀԳ/ կազմում:

Հետաքրքրության հայտի կազմում պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-նամակ՝ ուղղված ԾԻԳ-ի տնօրենին.
- Հայտատուի տվյալները, ներառյալ՝ ՀՀԳ կազմում գործընկերոջ տվյալները (ըստ տրամադրված ձևանմուշի).
- Տեխնիկական որակավորման պահանջներին համապատասխանող նախորդ նմանատիպ ծրագրերի մանրամասները, որտեղ հստակ նշվում է թե որ ներկայացված ծրագիրը որ չափանիշին է համապատասխանում: Ծրագրի մանրամասները պետք է ներառեն ծրագրի անվանումը, գտնվելու վայրը, բյուջեն, մեկնարկի ամսաթիվը, ավարտի ամսաթիվը, պատվիրատուի անվանումը և մատուցվող ծառայությունների շրջանակը (ըստ տրամադրված ձևանմուշի).
- Ֆինանսական աղյուսակ, որտեղ ներկայացվում է 2016, 2017 և 2018 թվականների տարեկան շրջանառությունը (ըստ տրամադրված ձևանմուշի):

Պահանջվող հիմնական որակավորում (կարճ ցուցակի կազմում)

Մանրամասն *Առաջադրությունների ներկայացման հրավեր* կուղարկվի սույն ծրագրի համար համապատասխան որակավորում ունեցող, կարճ ցուցակում ներառված ընկերություններին՝ հիմք ընդունելով որակավորման հետևյալ չափանիշները, որոնք կիրառելի են հետաքրքրության հայտ ներկայացնող ընկերության կամ ՀՀԳ-ի համար:

Տեխնիկական որակավորում

ա) Նմանատիպ տարածքներում գյուղատնտեսության և սննդի վերամշակման (սույն առաջադրանքին համապատասխանող) բնագավառներում ծրագրերի ուսումնասիրության և իրականացման փորձ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում)՝ առավելագույնը 25 միավոր.

բ) Շահառուների թիրախային խմբերի (օրինակ՝ աղքատների, կանանց, երիտասարդության, փոքրամասնությունների և այլն) հայտնաբերման և նրանց հետ աշխատելու, ֆերմերների հետ բիզնեսի և ֆինանսական պլանավորման, կայուն գյուղատնտեսության թեմաների վերաբերյալ դասընթացների անցկացման փորձ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում, ցանկալի է Հայաստանում)՝ առավելագույնը 25 միավոր.

գ) նմանատիպ կամ համապատասխան մեկնարկային (ստարտափ) փաթեթների նախագծման և պահանջների մշակման փորձ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում)՝ առավելագույնը 25 միավոր.

դ) Հայաստանում մասնակցային վերլուծության և համայնքահեն փոքրածավալ գյուղատնտեսական ու գյուղական ձեռներեցությանը տրամադրված իրականացման աջակցության, արժեշղթայի զարգացման ծրագրերի ոլորտում ապացուցելի բավարար փորձ՝ առավելագույնը 25 միավոր.

ե) Խորհրդատուն պետք է ունենա առնվազն 5 տարվա գործունեության պատմություն: ՀՀԳ-ի դեպքում այս պահանջը կիրառելի է առաջատար գործընկերոջ նկատմամբ:

Ֆինանսական որակավորում

Հետաքրքրության հայտ ներկայացնող խորհրդատուն/ծառայություն մատուցողը վերջին 3 տարիների ընթացքում (2016, 2017 և 2018 թթ.) պետք է ունենա ոչ պակաս, քան 100,000 ԱՄՆ դոլար /համարժեք/ միջին տարեկան շրջանառություն:

Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի անգլերեն լեզվով՝ 1 բնօրինակ և 1 պատճեն, էլեկտրոնային կամ թղթային տեսքով: Օրինակների միջև հակասության դեպքում առավելությունը կտրվի թղթային բնօրինակին:

Ծառայությունների առաջարկվող տևողությունը կազմում է 24 ամիս:

Խորհրդատուն կրնտրվի Որակի և գնի վրա հիմնված ընտրության (QCBS) եղանակով՝ 2010 թ. սեպտեմբերին ԳԶՄՀ-ի կողմից հրապարակված Գնումների ուղեցույցի և ձեռնարկի ընթացակարգերին կամ վերոնշյալի՝ երբևէ հրապարակված թարմացումներին համապատասխան: Ամբողջական Առաջադրանքի պայմանները և Հետաքրքրության հայտի ներկայացման ձևանմուշը հրապարակված են <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում: Լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների համար խնդրում ենք գրել procurement@raed.am էլեկտրոնային հասցեին: Պարզաբանումները պետք է ստացվեն վերջնաժամկետից առավելագույնը 10 օր առաջ, իսկ պատասխանները կհրապարակվեն առցանց՝ www.raed.am կայքում: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն նշված հասցեով մինչև 2020 թ. հունվարի 27-ը՝ ժամը 18:00-ն:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան
Հասցե՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծ 4, 6-րդ հարկ
Հեռ.՝ 374 10 54 65 10, էլփոստ՝ procurement@raed.am